



## Քաղվածք

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի  
նախարարության գիտամեթոդական խորհրդի 2021 թ.  
փետրվարի 25-ն ժամը 10.00-ին կայացած 1-ին նիստի  
արձանագրության

Նիստի նախագահ՝ Ա. Խզմալյան

Քարտուղար՝ Լ. Իգիթյան

Մասնակցում էին՝ Հ. Սանամյան, Ա. Գրիգորյան, Ս. Մելիք-Քարամյան,  
Կ. Այվազյան, Ա. Բադիշյան, Ս. Շաքարյան

Հրավիրված էին՝ Հ. Վանյան, Գ. Նազլուխանյան, Մ. Դանիելյան,  
Մ. Մովսիսյան, Գ. Հովհաննիսյան, Գ. Խաչատրյան,  
Ն. Թովմասյան, Ա. Զաքարյան, Հ. Մամիկոնյան

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

5. Երևան քաղաքի Հանրապետության Հրապարակ 4 հասցեում՝ Հայաստանի պատմության թանգարանի հարակից տարածքում կաթսայատան կառուցման և հարակից հուշարձանների պատերի պատուհանների բացվածքների լցափակման (հուշարձանի փոփոխման) էսքիզային նախագծի քննարկում:  
Զեկ՝ Հ. Մամիկոնյան

**ԼՍԵՑԻՆ՝** Հ. Մամիկոնյանը ներկայացրեց նախագիծը – Կաթսայատան նախագիծն իրականացվել է պատվիրատուի կողմից տրված առաջադրանքի և սեփականության իրավունքի գրանցման վկայականի հիման վրա: Նախագիծով առաջարկվում է Հայաստանի Պատմության թանգարանի տարածքում նոր կաթսայատան կառուցում:

СНП II-35-76 հակահրդեհային անվտանգության 1.8 կետի համաձայն՝ մինչև մոտակա պատուհանի բացվածքը պետք է լինի 8 մ, այս պատճառով առաջարկվում է քողարկել գոյություն ունեցող բացվածքները: Կառուցումը իրենից ներկայացնում է երկաթբետոնե հիմքով 5.0x6.8 մ առանցքային չափերով շինություն, որի արտաքին պատերը կառուցվելու են բետոնե բլոկներից և հարդարվում են ցեմենտավազե շաղախով: Տանիքը հարթ է և մեկուսացվում է 2 շերտ իզոգամով: Կոնստրուկտիվ համակարգը շրջանակային է: Սյուներն ունեն 30x30սմ հատվածք, պարզունակները՝ 30x40 սմ: Ծածկն իրականացված է միաձույլ ե/բ-ից 15 սմ հաստությամբ:

### **ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝**

Հ. Սանամյան – Կաթսայատունը որտե՞ղ եք նախատեսել:

Հ. Մամիկոնյան – Ջրավազանի տեղում:

Ս. Մելիք-Քարամյան – Իսկ մինչև համերգասրահն ի՞նչ եք նախատեսել:

Հ. Մամիկոնյան – Այդտեղ 8 մ հեռավորությունը:

Ա. Գրիգորյան – Պատուհանների փակման բովանդակությունը ո՞րն է: Կաթսայատունը 2 պատուհաններ ունի, դրան ինչպե՞ս եք վերաբերում: Ջրավազանի 1 մ քանդում եք նախատեսել:

Հ. Մամիկոնյան – Ըստ ԱԻՆ-ի նախագծային առաջադրանքի կաթսայատնից հեռավորությունը պետք է լինի ամենաքիչը 5 մ: Կաթսայատունը կարող է ունենալ պատուհաններ, բայց հուշարձանի պատուհանները փակվում են՝ ելնելով անվտանգությունից: Կաթսայատան պատուհանները նաև ապահովում են օդափոխությունը: Ջրավազանը չենք փակում: Հավելեմ, որ վերջինս ընդհանրապես չի օգտագործվում: Սկզբում նախատեսված է եղել կաթսայատունը կառուցել ՀՊԹ տանիքում: Նախատեսվում է նաև օդափոխության համակարգի փոփոխություն թանգարանում: Նախնական ընդհանրական նախագիծ է մշակվել, որն ընթացքում հատվածաբար ենթարկվել է լրամշակման:

Ա. Խզմայյան – Նույնանման նախնական նախագիծ է մշակվել նաև ՀԱՊ համար, որովհետև օդափոխության համակարգը հույժ կարևոր է թանգարանների ֆոնդերի ու ցուցասրահների պահպանության համար: Ջերմախոնավակարգի համակարգ է խիստ արդիական և շտապ: Այս աշխատանքները նախատեսվել է իրականացնել պետական բյուջեի միջոցներով: Ամառվա ամիսներին անթույլատրելի քանակությամբ արևային լույս է սողոսկում և՛ Պատմության թանգարան, և՛ ՀԱՊ, և՛ գրականության թանգարան: Լույսն առաջին թշնամին է կտավների և ֆոնդերի թղթային արխիվների: Լուրջ պահպանման խնդիր կա:

Ս. Մելիք-Քարամյան – Մի քանի տարի առաջ կաթսայատունն ամբողջապես տեղադրվում էր ջրավազանի վրա, որի քննարկման ժամանակ անթույլատրելի համարեցի: Նշյալ տարածքը սպասարկում է 3 թանգարան և 1 համերգասրահ: Վերջինիս օդափոխման սարքերը տեղադրված են նույն տեղում, որոնք խանգարում են: Նախնական քննարկման ժամանակ առաջարկեցի բոլորի համար համալիր օդափոխման համակարգ տեղադրել, որպեսզի խնդիրը հանվի: Առաջարկում եմ ստորգետնյա կաթսայատուն տեղադրել ու այս վայրում չունենալ ծավալի խնդիր:

- Հ. Մամիկոնյան – Կաթսայատան վրա տեղադրվելու է շիլլեր, որը կապահովի թանգարանի ջերմախոնավային անհրաժեշտ վիճակը: Կաթսայատան մի հատվածը, որը կապահովի մուտքը դեպի կաթսայատուն, կլինի ջրավազանի վրա հավաքվող մետաղե կոնստրուկցիայով, որպեսզի ջրավազանը չվնասվի:
- Հ. Սանամյան – Ներքին բակը, որը նաև Նալբանդյան փողոցից է դիտվում, ավելի է աղավաղվում:
- Հ. Մամիկոնյան – Դալանից ոչինչ չի երևալու, կաթսայատունը խորքում է:
- Կ. Այվազյան – Տանիքի տարբերակը ի՞նչու բացառվեց:
- Հ. Մամիկոնյան – Տանիքն ամրակայումից հետո կարող է պահել 10 տ, բայց համակարգի հաշվարկից հետո պարզվեց, որ կշռում է 16 տ՝ հատկապես, որ վիբրացիոն համարգով է աշխատելու: 10-12 սմ բետոնե հաստություն է ունենալու և վրան 2-5 սմ ավազահողային շերտ:
- Ա. Բաղիշյան – Հնարավո՞ր է բակում ստորգետնյա կաթսայատուն կառուցել: Եթե այսօր պահանջ կա ունենալու ձեռնարկի համակարգ և ԱԻՆ-ի կողմից նաև կա պահանջարկ, որ ջրավազանը լինի ու գործի, կարծում եմ միացյալ նախագիծ է պետք, որի մեջ կներառվի նաև ջրավազանը /նշելով սառը և տաք օդափոխության ուղիները/: Համալիր նախագիծ կարելի է ներկայացնել:
- Հ. Մամիկոնյան – Տեղ չունենք, քանի որ ՀԱՊ էլ է ուզում շիլլերով կաթսայատուն տեղադրել, իսկ համերգասրահն արդեն ունի տեղադրած, բայց ցանկանում են նորացնել: Տեղ չունենք փաստորեն տեղափոխելու, իսկ անգամ տեղափոխելու դեպքում՝ խնդիրներ կառաջանան ԱԻՆ-ի անվտանգության հետ:
- Հ. Սանամյան – Նույն հարցը հետագայում ՀԱՊ-ն ու համերգասրահն են բարձրացնելու:
- Հ. Վանյան – Ժամկետներ են ստույգ սահմանված ու իրական չէ միասնական նախագիծ ներկայացնելը, քանի որ չեն հասցնի մշակել:
- Հ. Մամիկոնյան – Թանգարանի մշակութային արժեքները վնասվում են ամեն օր այդ պատուհանների բաց լինելու պատճառով: Օդ չկա շնչելու, այս հարցը հրատապ է: ԱԻՆ-ը թույլ չի տալիս կաթսայատան կառուցումն առանց այս 4 պատուհանների փակման: Ներսում մենք փակել ենք պատուհաններն այնպես, որ ցերեկային լույսը չներթափանցի ու չփաչացնի թանգարանային նմուշները: Նորմատիվներն են պահանջում:
- Կ. Այվազյան – Որքան գիտեմ կաթսայատան կոնստրուկցիաները պետք է թեթև լինեն, որ պահեն, բայց նախատեսել եք ե/բ/, որի վրայից նաև շիլլեր: Տեխնիկապես ամեն ինչ հնարավոր է, բայց ելնելով հուշարձանի շահերից:
- Ա. Գրիգորյան – Կաթսայատան կառուցման խնդիրները նախ մասնագետների խնդիրն է, ապա նոր կոնստրուկտորների: Առաջարկում եմ սկզբում խորհրդակցել մասնագետների հետ: Անպայման համապատասխան մասնագետ է պետք ներգրավել:
- Ա. Բաղիշյան – Անհրաժեշտ է լիցենզավորված կազմակերպության համալիր փորձաքննություն նաև՝ համաձայն 596 կարգի: Եթե կաթսայատունը պայթուցավտանգ է՝ արդյո՞ք դրա վրա կարելի է շիլլեր դնել:

**ՈՐՈՇՎԵՑ՝** Երևան քաղաքի Հանրապետության Հրապարակ 4 հասցեում՝ Հայաստանի պատմության թանգարանի հարակից տարածքում կաթսայատան կառուցման և հարակից հուշարձանների պատերի պատուհանների բացվածքների լցափակման (հուշարձանի փոփոխման) էսքիզային նախագծի 1. չորս պատուհանների փակմանը տալ համաձայնություն, 2. կաթսայատան կառուցման վերաբերյալ նախագիծը կրկին քննարկել համապատասխան մասնագետների և լիազոր մարմինների հետ:

Խորհրդի նախագահ՝



Ա. ԽԱՇՄԱԼՅԱՆ

Քարտուղար՝



Լ. ԻԳԻԹՅԱՆ